



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2006թ. մարտին /վերլուծություն/

2006թ. մարտին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 12596 գործարքներ, որոնց քանակը 2006թ. փետրվարի և 2005թ. մարտի համեմատ աճել է համապատասխանաբար 27.3%-ով և 13.6%-ով:

2006թ. մարտին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2006թ. մարտին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2006թ. մարտին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4345 օտարման գործարքների 87.5%-ը կազմել են առուվաճառքները, 12.0%-ը՝ նվիրատվությունները և

0.5%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 37.3%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ 40.1%-ը՝ բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ:

2006թ. մարտին անշարժ գույքի օտարման գործարքների քանակը 2006թ. փետրվարի համեմատ աճել է 39.4%-ով, իսկ 2005թ. մարտի համեմատ՝ 14.0%-ով:

2006թ. մարտին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 66.6%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2006թ. փետրվարի համեմատ բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 44.4%-ով, իսկ 2005թ. մարտի համեմատ՝ 7.9%-ով:

2006թ. մարտին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները և դրանց փոփոխման միջակայքերը.

/1ԱՄՆ դոլարը 2006թ. մարտին համարժեք է 451.5դրամին/

| Համայնքներ | Նվազագույն և առավելագույն գները 2006թ. մարտին /ՀՀ դրամ/ | Միջին գները /ՀՀ դրամ/ | | |
|-------------------------------------|---|-----------------------|-----------------|-----------------|
| | | մարտ 2005թ. | մարտ 2006թ. | փետրվար 2006թ. |
| Կենտրոն | 157500.0-540100.0 | 270900.0 | 361900.0 | 358200.0 |
| Արաբկիր | 112500.0-405100.0 | 210400.0 | 281200.0 | 276800.0 |
| Քանաքեռ-Զեյթուն | 90000.0-270100.0 | 128400.0 | 173800.0 | 168800.0 |
| Նոր-Նորք | 90000.0-225100.0 | 116300.0 | 161500.0 | 158400.0 |
| Ավան | 99000.0-180000.0 | 112100.0 | 143100.0 | 140400.0 |
| Էրեբունի | 90000.0-225100.0 | 102700.0 | 139500.0 | 138200.0 |
| Շենգավիթ | 90000.0-202500.0 | 125600.0 | 173000.0 | 171500.0 |
| Դավթաշեն | 90000.0-225100.0 | 135500.0 | 178300.0 | 174400.0 |
| Աջափնյակ | 90000.0-225100.0 | 121000.0 | 161400.0 | 159800.0 |
| Մալաթիա-Սեբաստիա | 90000.0-202500.0 | 119600.0 | 158500.0 | 155700.0 |
| Նուբարաշեն | 58500.0-135000.0 | 48300.0 | 101400.0 | 99000.0 |
| Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/ | 58500.0-540100.0 | 135500.0 | 184900.0 | 181900.0 |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2006թ. մարտին, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գների ամսական աճը կազմել է 1.5%:

2006թ. մարտին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 529 բնակարաններ, որոնց քանակը 2006թ. փետրվարի համեմատ աճել է 37.0%-ով, իսկ 2005թ. մարտի համեմատ՝ 14.8%-ով:

2006թ. մարտին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները և դրանց փոփոխման միջակայքերը.

| Մարզեր | Քաղաքներ | Նվազագույն և առավելագույն գները 2006թ. մարտին /ՀՀ դրամ/ | Միջին գները /ՀՀ դրամ/ | | |
|-----------|----------|---|-----------------------|-------------|----------------|
| | | | մարտ 2005թ. | մարտ 2006թ. | փետրվար 2006թ. |
| Արագածոտն | Աշտարակ | 36000.0-72000.0 | 37600.0 | 58700.0 | 53200.0 |

| | | | | | |
|-------------|-------------|-----------------|---------|---------|---------|
| | Ապարան | 13500.0-31500.0 | 18800.0 | 24700.0 | 24200.0 |
| | Թալին | 11300.0-33800.0 | 15800.0 | 23300.0 | 23300.0 |
| Արարատ | Արտաշատ | 24800.0-49500.0 | 31100.0 | 43700.0 | 42200.0 |
| | Մասիս | 36000.0-67500.0 | 32000.0 | 53400.0 | 53000.0 |
| | Վեդի | 22500.0-45000.0 | 20300.0 | 37200.0 | 36100.0 |
| | Արարատ | 20300.0-45000.0 | 20600.0 | 38600.0 | 38500.0 |
| Արմավիր | Վաղարշապատ | 49500.0-94500.0 | 55800.0 | 77800.0 | 76200.0 |
| | Արմավիր | 27000.0-58500.0 | 35600.0 | 49100.0 | 47000.0 |
| | Մեծամոր | 18000.0-36000.0 | 16900.0 | 31600.0 | 29900.0 |
| Գեղարքունիք | Սևան | 18000.0-40500.0 | 17900.0 | 32900.0 | 32400.0 |
| | Գավառ | 13500.0-33800.0 | 16400.0 | 24100.0 | 23500.0 |
| | Մարտունի | 22500.0-67500.0 | 17200.0 | 37700.0 | 36900.0 |
| | Վարդենիս | 9000.0-29300.0 | 8400.0 | 19900.0 | 19300.0 |
| | Ճամբարակ | 5900.0-20300.0 | 8500.0 | 13600.0 | 10700.0 |
| Լոռի | Վանաձոր | 27000.0-49500.0 | 32300.0 | 44000.0 | 43300.0 |
| | Ստեփանավան | 15800.0-29300.0 | 17300.0 | 23400.0 | 22900.0 |
| | Սյիտակ | 18000.0-45000.0 | 22300.0 | 31600.0 | 26800.0 |
| | Ալավերդի | 9000.0-29300.0 | 12700.0 | 19600.0 | 19100.0 |
| | Տաշիր | 11300.0-24800.0 | 11900.0 | 19900.0 | 19800.0 |
| | Թումանյան | 4100.0-11300.0 | 5100.0 | 5200.0 | 5200.0 |
| | Շամլուղ | 2300.0-8300.0 | 2800.0 | 2800.0 | 2700.0 |
| | Ախթալա | 6800.0-16000.0 | 10500.0 | 10300.0 | 10300.0 |
| Կոտայք | Արովյան | 45000.0-92300.0 | 57500.0 | 87600.0 | 82300.0 |
| | Նոր Հաճն | 40500.0-65300.0 | 39000.0 | 58900.0 | 57800.0 |
| | Բյուրեղավան | 22500.0-51800.0 | 24500.0 | 40300.0 | 38800.0 |
| | Եղվարդ | 31500.0-58500.0 | 28900.0 | 54300.0 | 52100.0 |
| | Հրազդան | 20300.0-40500.0 | 25300.0 | 34700.0 | 34100.0 |
| | Ծաղկաձոր | 18000.0-81000.0 | 44700.0 | 70000.0 | 63900.0 |
| | Չարենցավան | 24800.0-45000.0 | 21600.0 | 38600.0 | 37500.0 |
| Շիրակ | Գյումրի | 27000.0-58500.0 | 37200.0 | 46600.0 | 45100.0 |
| | Արթիկ | 15800.0-33800.0 | 14900.0 | 29100.0 | 26300.0 |
| | Մարալիկ | 8100.0-31500.0 | 13300.0 | 21700.0 | 21600.0 |
| Սյունիք | Գորիս | 20300.0-58500.0 | 20300.0 | 49900.0 | 47400.0 |
| | Կապան | 22500.0-45000.0 | 16300.0 | 38300.0 | 37300.0 |
| | Սիսիան | 18000.0-40500.0 | 18300.0 | 30900.0 | 29900.0 |
| | Մեղրի | 13500.0-33800.0 | 12300.0 | 24600.0 | 24500.0 |
| | Ագարակ | 9000.0-27000.0 | 11800.0 | 18600.0 | 18500.0 |
| | Քաջարան | 9000.0-31500.0 | 9300.0 | 22800.0 | 22700.0 |
| | Դաստակերտ | 4500.0-11300.0 | 6400.0 | 6400.0 | 6300.0 |
| Վայոց Ձոր | Վայք | 13500.0-38300.0 | 20800.0 | 31700.0 | 30800.0 |
| | Եղեգնաձոր | 24800.0-58500.0 | 28100.0 | 49900.0 | 47500.0 |
| | Ջերմուկ | 36000.0-81000.0 | 31100.0 | 57500.0 | 54900.0 |
| Տավուշ | Դիլիջան | 18000.0-49500.0 | 22400.0 | 39200.0 | 36900.0 |
| | Իջևան | 27000.0-72000.0 | 28100.0 | 47600.0 | 45900.0 |
| | Բերդ | 18000.0-45000.0 | 17500.0 | 28200.0 | 26200.0 |
| | Նոյեմբերյան | 9000.0-22500.0 | 12900.0 | 15100.0 | 14600.0 |

2006թ. մարտին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գների ամսական աճը կազմել է 4.1%:

2006թ. մարտին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 494 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 117, մյուս մարզերում միասին վերցրած՝ 377: 2006թ. փետրվարի համեմատ անհատական բնակելի

տների առուվաճառքների գործարքների քանակը աճել է 23.5%-ով, ընդ որում Երևանում՝ 51.9%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 16.7%-ով: 2005թ. մարտի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 19.6%-ով, ընդ որում Երևանում՝ 23.2%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 18.6%-ով:

2006թ. մարտին Երևան քաղաքի համայնքներում շինության 250.0 քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը, և դրանց փոփոխման միջակայքերը.

| Համայնքներ | Նվազագույն և առավելագույն գները 2006թ. մարտին /ՀՀ դրամ/ | Միջին գները /ՀՀ դրամ/ | | |
|-----------------------------------|---|-----------------------|-----------------|-----------------|
| | | մարտ 2005թ. | մարտ 2006թ. | փետրվար 2006թ. |
| Կենտրոն | 135000.0-900200.0 | 274700.0 | 375600.0 | 364900.0 |
| Արարկյի | 90000.0-450100.0 | 212500.0 | 293700.0 | 287700.0 |
| Քանաքեռ-Զեյթուն | 67500.0-270100.0 | 129900.0 | 176200.0 | 171900.0 |
| Նորք-Մարաշ | 90000.0-450100.0 | 167100.0 | 186000.0 | 184000.0 |
| Ավան | 90000.0-360100.0 | 113600.0 | 147500.0 | 144800.0 |
| Էրեբունի | 67500.0-225100.0 | 104600.0 | 144000.0 | 142500.0 |
| Շենգավիթ | 67500.0-202500.0 | 128200.0 | 176400.0 | 174200.0 |
| Դավթաշեն | 90000.0-405100.0 | 136900.0 | 181000.0 | 177500.0 |
| Աջափնյակ | 67500.0-270100.0 | 122900.0 | 165400.0 | 162400.0 |
| Մալաթիա-Սեբաստիա | 67500.0-405100.0 | 121200.0 | 161100.0 | 158800.0 |
| Նուբարաշեն | 40500.0-135000.0 | 49700.0 | 103900.0 | 101900.0 |
| Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/ | 40500.0-900200.0 | 141900.0 | 191900.0 | 188200.0 |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2006թ. մարտին անհատական բնակելի տների շինության 1 քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գների /ներառյալ տնամերձի միավորի գինը/ ամսական աճը կազմել է 2.0%:

2006թ. մարտին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/ և դրանց փոփոխման միջակայքերը.

| Մարզեր | Քաղաքներ | Նվազագույն և առավելագույն գները 2006թ. մարտին /ՀՀ դրամ/ | Միջին գները /ՀՀ դրամ/ | | |
|-----------|------------|---|-----------------------|-------------|----------------|
| | | | մարտ 2005թ. | մարտ 2006թ. | փետրվար 2006թ. |
| Արագածոտն | Աշտարակ | 27000.0-81000.0 | 41100.0 | 60600.0 | 54100.0 |
| | Ապարան | 13500.0-36000.0 | 19400.0 | 26000.0 | 25600.0 |
| | Թալին | 13500.0-36000.0 | 16400.0 | 24700.0 | 24200.0 |
| Արարատ | Արտաշատ | 22500.0-58500.0 | 31400.0 | 45100.0 | 43300.0 |
| | Մասիս | 25000.0-58500.0 | 32800.0 | 54400.0 | 53800.0 |
| | Վեդի | 22500.0-45000.0 | 23100.0 | 38200.0 | 37100.0 |
| | Արարատ | 22500.0-45000.1 | 21600.0 | 39600.0 | 39400.0 |
| Արմավիր | Վաղարշապատ | 36000.0-99000.0 | 56600.0 | 78700.0 | 77500.0 |

| | | | | | |
|-------------|-------------|------------------|---------|---------|---------|
| | Արմավիր | 22500.0-67500.0 | 36000.0 | 50000.0 | 48300.0 |
| Գեղարքունիք | Սևան | 18000.0-49500.0 | 19800.0 | 38200.0 | 38100.0 |
| | Գավառ | 9000.0-36000.0 | 18700.0 | 25200.0 | 24500.0 |
| | Մարտունի | 13500.0-45000.0 | 19200.0 | 38600.0 | 38500.0 |
| | Վարդենիս | 9000.0-31500.0 | 10200.0 | 21500.0 | 21500.0 |
| | Ճամբարակ | 4500.0-22500.0 | 10500.0 | 14800.0 | 12600.0 |
| Լոռի | Վանաձոր | 22500.0-54000.0 | 33400.0 | 45200.0 | 44300.0 |
| | Ստեփանավան | 13500.0-36000.0 | 23600.0 | 26800.0 | 26700.0 |
| | Սպիտակ | 13500.0-36000.0 | 23400.0 | 33200.0 | 28600.0 |
| | Ալավերդի | 9000.0-31500.0 | 14000.0 | 20800.0 | 20300.0 |
| | Տաշիր | 9000.0-31500.0 | 13300.0 | 21400.0 | 21400.0 |
| | Թումանյան | 4500.0-18000.0 | 6300.0 | 6900.0 | 6800.0 |
| | Շամլուղ | 2300.0-13500.0 | 3900.0 | 4300.0 | 4300.0 |
| | Ախթալա | 9000.0-22500.0 | 11200.0 | 11900.0 | 11900.0 |
| Կոտայք | Արուսյան | 31500.0-99000.0 | 57900.0 | 89700.0 | 84000.0 |
| | Նոր Հաճն | 18000.0-76500.0 | 40200.0 | 60000.0 | 59200.0 |
| | Բյուրեղավան | 18000.0-45000.0 | 25100.0 | 41200.0 | 39800.0 |
| | Եղվարդ | 22500.0-63000.0 | 29500.0 | 55800.0 | 52800.0 |
| | Հրազդան | 18000.0-40500.0 | 27400.0 | 36100.0 | 35800.0 |
| | Ծաղկաձոր | 36000.0-112500.0 | 48200.0 | 70900.0 | 65100.0 |
| | Չարենցավան | 18000.0-45000.0 | 23200.0 | 39600.0 | 38300.0 |
| Շիրակ | Գյումրի | 27000.0-67500.0 | 43200.0 | 47700.0 | 47000.0 |
| | Արթիկ | 9000.0-40500.0 | 15600.0 | 30300.0 | 27500.0 |
| | Մարալիկ | 13500.0-36000.0 | 13900.0 | 23500.0 | 23400.0 |
| Սյունիք | Գորիս | 18000.0-58500.0 | 20700.0 | 51700.0 | 48700.0 |
| | Կապան | 13500.0-45000.0 | 17200.0 | 39800.0 | 37900.0 |
| | Սիսիան | 13500.0-40500.0 | 19200.0 | 32300.0 | 30900.0 |
| | Մեղրի | 13500.0-36000.0 | 13400.0 | 26500.0 | 25300.0 |
| | Ագարակ | 9000.0-36000.0 | 13200.0 | 21100.0 | 19900.0 |
| | Դաստակերտ | 4500.0-18000.0 | 7800.0 | 8700.0 | 8600.0 |
| Վայոց Ձոր | Վայք | 13500.0-40500.0 | 22000.0 | 33100.0 | 32800.0 |
| | Եղեգնաձոր | 18000.0-63000.0 | 28500.0 | 51200.0 | 48400.0 |
| | Ջերմուկ | 13500.0-40500.0 | 20700.0 | 34400.0 | 33000.0 |
| Տավուշ | Դիլիջան | 18000.0-58500.0 | 27200.0 | 40200.0 | 37600.0 |
| | Իջևան | 18000.0-58500.1 | 28900.0 | 49700.0 | 47000.0 |
| | Բերդ | 13500.0-40500.0 | 18200.0 | 29100.0 | 27100.0 |
| | Նոյեմբերյան | 9000.0-31500.0 | 14500.0 | 15900.0 | 15500.0 |

2006թ. մարտին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության, 1 քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գների /ներառյալ տնամերձի միավորի գինը/ ամսական աճը կազմել է 4.2%:

Ընդհանուր առմամբ, 2006թ. մարտին հանրապետությունում օտարվել են 2613.30 հա /այդ թվում՝ 11.11 հա Երևանում/ ընդհանուր մակերեսով հողեր, որից 2450.22 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության հողերը Ընդ որում 2583.34 հա /այդ թվում՝ 10.08 հա Երևանում/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից 2515.50 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

Օտարված 28.26 հա /այդ թվում՝ 0.55 հա Երևանում/ հողերի նկատմամբ իրականացվել են նվիրատվության գործարքներ, որից 23.80 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

Օտարված 1.69 հա /այդ թվում՝ 0.48 հա Երևանում/ հողերի նկատմամբ իրականացվել են փոխանակության գործարքներ, որից 0.92 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

Հողերի առուվաճառքների առավել մեծ մակերեսներ արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 1556.37 հա, որից 1549.60 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

Ստորև ներկայացվում է 2006թ. մարտին մարզերում հողերի առուվաճառքի քանակների և մակերեսների բաշխվածությունը, որտեղ ներառված չեն արդյունաբերական օբյեկտների և հատուկ պահպանվող տարածքների հողերը.

| ԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող | | | | | | Մասնավոր սեփականություն հանդիսացող | | | | | |
|------------------|--|----------------|--------------------------------------|---------------|--------------------------------|---------------|---|---------------|--------------------------------------|---------------|--------------------------------|---------------|
| | Գյուղատնտեսական նշանակության հողերի | | Բնակավայրերի հողեր | | | | Գյուղատնտեսական նշանակության հողերի | | Բնակավայրերի հողեր | | | |
| | | | բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի | | հասարակական կառուցապատ. հողերի | | | | բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի | | հասարակական կառուցապատ. հողերի | |
| | Միավորների քանակը | Մակերեսը /հա/ | Միավորների քանակը | Մակերեսը /հա/ | Միավորների քանակը | Մակերեսը /հա/ | Միավորների քանակը | Մակերեսը /հա/ | Միավորների քանակը | Մակերեսը /հա/ | Միավորների քանակը | Մակերեսը /հա/ |
| Երևան | 0 | 0.00 | 6 | 0.24 | 15 | 2.38 | 0 | 0.00 | 48 | 4.31 | 15 | 2.68 |
| Արագածոտն | 51 | 663.77 | 0 | 0.00 | 8 | 0.02 | 51 | 31.03 | 31 | 3.43 | 2 | 0.06 |
| Արարատ | 8 | 5.09 | 20 | 1.65 | 15 | 0.75 | 121 | 44.64 | 97 | 9.05 | 1 | 0.004 |
| Արմավիր | 87 | 1341.03 | 6 | 0.59 | 5 | 0.51 | 114 | 208.57 | 61 | 5.67 | 0 | 0.00 |
| Գեղարքունիք | 0 | 0.00 | 21 | 1.41 | 6 | 0.61 | 18 | 16.81 | 17 | 1.71 | 0 | 0.00 |
| Լոռի | 1 | 0.38 | 0 | 0.00 | 16 | 9.09 | 27 | 34.54 | 5 | 0.43 | 1 | 0.02 |
| Կոտայք | 18 | 21.85 | 25 | 2.22 | 11 | 1.59 | 139 | 60.60 | 95 | 8.95 | 3 | 0.51 |
| Շիրակ | 7 | 9.73 | 13 | 0.43 | 14 | 0.64 | 19 | 32.09 | 2 | 0.45 | 1 | 0.01 |
| Սյունիք | 0 | 0.00 | 0 | 0.00 | 16 | 1.05 | 24 | 20.79 | 1 | 0.06 | 0 | 0.00 |
| Վայոց Ձոր | 2 | 0.90 | 0 | 0.00 | 17 | 0.69 | 14 | 3.98 | 4 | 0.63 | 0 | 0.00 |
| Տավուշ | 1 | 2.50 | 1 | 0.09 | 2 | 0.02 | 61 | 17.19 | 10 | 0.82 | 0 | 0.00 |
| ԸՆԴԱՄԱՆՆԸ | 175 | 2045.25 | 92 | 6.63 | 125 | 17.35 | 588 | 470.24 | 371 | 35.51 | 23 | 3.28 |

2006թ. մարտին հանրապետությունում արձանագրվել են 1419 միավոր հողերի առուվաճառքի գործարքներ /2005թ մարտին՝ 1269/ այդ թվում 763-ը՝ գյուղատնտեսական նշանակության /794/, 612-ը՝ բնակավայրերի /469/, 13-ը՝ արդյունաբերական օբյեկտների /6/, 31-ը՝ հատուկ պահպանվող տարածքների հողեր:

2006թ. մարտին հողերի առուվաճառքներից 313 միավորը իրականացվել են աճուրդների միջոցով /2005թ մարտին՝ 399/, այդ թվում 3-ը՝ /0.16 հա/ Երևանում /40/, իսկ 310-ը՝ /2056.02 հա/ մյուս մարզերում /359/: Աճուրդային կարգով վաճառված հողերից 170 միավորը /2040.93 հա/ հանդիսացել է գյուղատնտեսական /2005թ մարտին՝ 279/, 89-ը՝ /6.56 հա/ բնակելի կառուցապատման /տնամերձ/ /82/, 51-ը՝ /6.65 հա/ հասարակական կառուցապատման /33/, 2-ը՝ /0.05 հա/ արդյունաբերական օբյեկտի /5/ և 1-ը՝ /2.00 հա/ հատուկ պահպանվող տարածքների հողեր:

2006թ. մարտին, հանրապետությունում արձանագրված 763 միավոր գյուղատնտեսական նշանակության հողերի առուվաճառքներից 170-ը իրականացվել են աճուրդների, 5-ը՝ դատարանի վճիռների և 5-ը՝ ուղղակի վաճառքների միջոցով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

| Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը | Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների | | | | | Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների | | | | |
|---|--|---------------|---|--------------|--------|---|---------------|--|--------------|--------|
| | Միավորների քանակը | Մակերես /հա / | արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/ | | | Միավորների քանակը | Մակերես /հա / | արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/ | | |
| | | | Նվազագույն | Առավելագույն | Միջին | | | Նվազագույն | Առավելագույն | Միջին |
| Արագածոտնի մարզ | | | | | | | | | | |
| Աշտարակ | 18 | 38.77 | 36.1 | 833.0 | 336.4 | 38 | 11.31 | 361.2 | 6772.5 | 2176.2 |
| Ապարան | | | | | | 2 | 5.66 | 90.3 | 767.6 | 307.0 |
| Թալին | 33 | 625.00 | 33.9 | 313.8 | 42.9 | 11 | 14.07 | 90.3 | 758.5 | 293.5 |
| Ծաղկահովիտ | | | | | | | | 76.8 | 948.2 | 140.0 |
| Արարատի մարզ | | | | | | | | | | |
| Արտաշատ | 3 | 1.67 | 119.6 | 2146.9 | 815.0 | 47 | 14.33 | 334.1 | 5418.0 | 1142.3 |
| Մասիս | 1 | 2.00 | 1155.8 | 1155.8 | 1155.8 | 18 | 5.03 | 180.6 | 6772.5 | 1512.5 |
| Վեդի | 3 | 1.08 | 90.3 | 158.0 | 115.1 | 56 | 25.28 | 203.2 | 4515.0 | 930.1 |
| Արմավիրի մարզ | | | | | | | | | | |
| Արմավիր | 2 | 1.15 | 474.1 | 1609.6 | 1043.0 | 31 | 31.33 | 293.5 | 4063.5 | 740.5 |
| Բաղրամյան | 52 | 992.64 | 24.8 | 33.9 | 33.4 | 21 | 139.98 | 90.3 | 677.3 | 451.5 |
| Վաղարշապատ | 33 | 347.24 | 2.3 | 191.9 | 49.7 | 59 | 35.50 | 442.5 | 9030.0 | 1264.2 |
| Գեղարքունիքի մարզ | | | | | | | | | | |
| Գավառ | | | | | | 1 | 0.10 | 189.6 | 496.7 | 311.5 |
| Ճամբարակ | | | | | | 5 | 2.78 | 45.2 | 541.8 | 117.4 |
| Մարտունի | | | | | | 8 | 2.03 | 45.2 | 1806.0 | 447.0 |
| Սևան | | | | | | 1 | 0.44 | 45.2 | 451.5 | 173.8 |
| Վարդենիս | | | | | | 3 | 11.47 | 27.1 | 532.8 | 189.6 |
| Լոռու մարզ | | | | | | | | | | |
| Այվերդի | | | | | | 2 | 0.41 | 162.5 | 2483.3 | 334.1 |
| Գուգարք | 1 | 0.38 | 368.0 | 368.0 | 368.0 | | | 225.8 | 2709.0 | 857.9 |
| Սպիտակ | | | | | | | | 225.8 | 1490.0 | 469.6 |
| Ստեփանավան | | | | | | 21 | 28.40 | 90.3 | 2257.5 | 316.1 |
| Տաշիր | | | | | | 4 | 5.73 | 45.2 | 451.5 | 185.1 |
| Կոտայքի մարզ | | | | | | | | | | |
| Աբովյան | | | | | | 40 | 11.23 | 270.9 | 11287.5 | 2871.5 |
| Եղվարդ | 2 | 0.40 | 623.1 | 623.1 | 623.1 | 85 | 43.43 | 171.6 | 11287.5 | 1991.1 |
| Հրազդան | 15 | 20.95 | 45.2 | 666.0 | 155.8 | 14 | 5.94 | 112.9 | 2709.0 | 686.3 |
| Շիրակի մարզ | | | | | | | | | | |
| Ախուրյան | | | | | | 8 | 7.45 | 248.3 | 1693.1 | 383.8 |
| Ամասիա | | | | | | 7 | 20.53 | 36.1 | 237.0 | 94.8 |
| Անի | 3 | 5.51 | 279.9 | 282.2 | 281.3 | 2 | 1.17 | 108.4 | 361.2 | 194.1 |
| Աշոցք | | | | | | | | 45.2 | 112.9 | 99.3 |
| Արթիկ | 1 | 0.74 | 178.3 | 178.3 | 178.3 | 2 | 2.93 | 63.2 | 1083.6 | 153.5 |
| Սյունիքի մարզ | | | | | | | | | | |
| Գորիս | | | | | | 8 | 3.67 | 90.3 | 722.4 | 284.4 |
| Կապան | | | | | | 3 | 2.55 | 54.2 | 903.0 | 207.7 |
| Մեղրի | | | | | | | | 180.6 | 1914.4 | 406.4 |
| Սիսիան | | | | | | 13 | 14.57 | 45.2 | 677.3 | 158.0 |
| Վայոց Ձորի մարզ | | | | | | | | | | |
| Եղեգնաձոր | | | | | | 11 | 2.74 | 117.4 | 2709.0 | 1164.9 |
| Վայք | 2 | 0.90 | 36.1 | 155.8 | 97.1 | 1 | 0.53 | 54.2 | 1535.1 | 460.5 |
| Տավուշի մարզ | | | | | | | | | | |
| Բերդ | | | | | | 47 | 11.65 | 45.2 | 903.0 | 307.0 |
| Իջևան | 1 | 2.50 | 81.3 | 81.3 | 81.3 | | | 239.3 | 1806.0 | 745.0 |
| Նոյեմբերյան | | | | | | 14 | 5.54 | 45.2 | 3765.5 | 424.4 |

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

2006թ. մարտին հանրապետությունում, բացառությամբ Երևանը, արձանագրված 409 միավոր բնակելի կառուցապատման հողերի առուվաճառքներից 86-ը իրականացվել են աճուրդների և 5-ը՝ դատարանի վճիռների միջոցով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով վաճառքների տվյալները.

| Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը | Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների | | | | | Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների | | | | |
|---------------------------------------|--|---------------|---|--------------|--------|--|---------------|---|--------------|--------|
| | Միավորների քանակը | Մակերեսը /քմ/ | արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/ | | | Միավորների քանակը | Մակերեսը /քմ/ | արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/ | | |
| | | | Նվազագույն | Առավելագույն | Միջին | | | Նվազագույն | Առավելագույն | Միջին |
| Արագածոտնի մարզ | | | | | | | | | | |
| Աշտարակ | | | | | | 31 | 34320.0 | 112.9 | 3612.0 | 1932.4 |
| Ապարան | | | | | | | | 112.9 | 632.1 | 158.0 |
| Թային | | | | | | | | 45.2 | 361.2 | 67.7 |
| Ծաղկահովիտ | | | | | | | | 45.2 | 361.2 | 63.2 |
| Արարատի մարզ | | | | | | | | | | |
| Արտաշատ | 5 | 5000.0 | 435.7 | 1499.0 | 862.4 | 22 | 24280.0 | 135.5 | 2709.0 | 704.3 |
| Մասիս | 15 | 11510.0 | 447.0 | 661.4 | 636.6 | 44 | 32350.0 | 135.5 | 9030.0 | 921.1 |
| Վեդի | | | | | | 31 | 33855.0 | 112.9 | 993.3 | 514.7 |
| Արմավիրի մարզ | | | | | | | | | | |
| Արմավիր | 6 | 5900.0 | 142.2 | 277.7 | 250.6 | 18 | 17797.0 | 135.5 | 2257.5 | 889.5 |
| Բաղրամյան | | | | | | | | 81.3 | 270.9 | 108.4 |
| Վաղարշապատ | | | | | | 40 | 35364.0 | 135.5 | 4515.0 | 1192.0 |
| Գեղարքունիքի մարզ | | | | | | | | | | |
| Գավառ | 20 | 13300.0 | 88.0 | 1749.6 | 368.0 | 2 | 2100.0 | 135.5 | 903.0 | 302.5 |
| Ճամբարակ | | | | | | | | 45.2 | 135.5 | 72.2 |
| Մարտունի | | | | | | 12 | 10600.0 | 90.3 | 451.5 | 176.1 |
| Սևան | 1 | 800.0 | 340.9 | 340.9 | 340.9 | | | 90.3 | 903.0 | 117.4 |
| Վարդենիս | | | | | | 3 | 4428.0 | 45.2 | 225.8 | 76.8 |
| Լոռու մարզ | | | | | | | | | | |
| Ալավերդի | | | | | | 1 | 240.0 | 67.7 | 270.9 | 94.8 |
| Գուգարք | | | | | | | | 67.7 | 2347.8 | 487.6 |
| Սյիսակ | | | | | | 1 | 1430.0 | 63.2 | 451.5 | 99.3 |
| Ստեփանավան | | | | | | 3 | 2586.0 | 45.2 | 270.9 | 72.2 |
| Տաշիր | | | | | | | | 45.2 | 135.5 | 61.0 |
| Կոտայքի մարզ | | | | | | | | | | |
| Աբովյան | 4 | 3247.0 | 2332.0 | 2356.8 | 2343.3 | 43 | 38036.0 | 135.5 | 6772.5 | 1426.7 |
| Եղվարդ | 1 | 500.0 | 2374.9 | 2374.9 | 2374.9 | 43 | 40800.0 | 135.5 | 6772.5 | 1607.3 |
| Հրազդան | 20 | 18495.0 | 74.5 | 695.3 | 110.6 | 8 | 10120.0 | 135.5 | 9030.0 | 1020.4 |
| Շիրակի մարզ | | | | | | | | | | |
| Ախուրյան | 12 | 3544.0 | 749.5 | 2187.5 | 1293.5 | 2 | 4500.0 | 112.9 | 1535.1 | 261.9 |
| Ամասիա | | | | | | | | 45.2 | 135.5 | 61.0 |
| Անի | 1 | 800.0 | 40.6 | 40.6 | 40.6 | | | 67.7 | 180.6 | 83.5 |
| Աշոցք | | | | | | | | 40.6 | 135.5 | 54.2 |

| | | | | | | | | | | |
|-----------------|---|-------|-------|-------|-------|---|--------|------|--------|-------|
| Արթիկ | | | | | | | | 67.7 | 925.6 | 121.9 |
| Սյունիքի մարզ | | | | | | | | | | |
| Գորիս | | | | | | | | 67.7 | 541.8 | 203.2 |
| Կապան | | | | | | | | 67.7 | 632.1 | 185.1 |
| Մեղրի | | | | | | 1 | 620.0 | 67.7 | 406.4 | 103.8 |
| Սիսիան | | | | | | | | 67.7 | 406.4 | 117.4 |
| Վայոց Ձորի մարզ | | | | | | | | | | |
| Եղեգնաձոր | | | | | | 3 | 4470.0 | 67.7 | 1128.8 | 221.2 |
| Վայք | | | | | | | | 76.8 | 632.1 | 101.6 |
| Տավուշի մարզ | | | | | | | | | | |
| Բերդ | | | | | | | | 45.2 | 632.1 | 76.8 |
| Իջևան | | | | | | 9 | 7110.0 | 67.7 | 1354.5 | 320.6 |
| Նոյեմբերյան | 1 | 900.0 | 291.2 | 291.2 | 291.2 | 1 | 1080.0 | 45.2 | 632.1 | 99.3 |

2006թ. մարտին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են անհատույց սեփականաշնորհման 9 գործարքներ 1.78 հա մակերեսով, ընդ որում 8-ը՝ Արարատի /1.72 հա/ և 1-ը՝ Կոտայքի /0.07 հա/ մարզերում:

2006թ. մարտին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 871 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 6.9%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 35.0%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից: 2006թ. փետրվարի համեմատ անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակն աճել է 67.8%-ով, իսկ 2005թ. մարտի համեմատ նվազել՝ 18.6%-ով:

2006թ. մարտին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 53 բնակարանների, 20 անհատական բնակելի տների, 245 հասարակական, 35 արտադրական նշանակության օբյեկտների, 511 միավոր հողերի, 6 ավտոտնակների և 1 այգետնակի վարձակալության գործարքներ:

2006թ. մարտին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 33 վարձակալության գործարքների քանակը 2006թ. փետրվարի համեմատ աճել է 26.9%-ով, իսկ 2005թ. մարտի համեմատ՝ 22.2%-ով:

2006թ. մարտին հանրապետությունում վարձակալվել են 3102.01 հա ընդհանուր մակերեսով հողեր /այդ թվում 3.77 հա Երևանում/: Մարզերում վարձակալված հողերից 3008.68 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 9.61 հա՝ բնակավայրերի, 44.34 հա՝ արդյունաբերական օբյեկտների, 3.50 հա՝ անտառային, 10.00 հա՝ ընդերքի օգտագործման համար նախատեսված, 22.11 հա՝ հատուկ պահպանվող տարածքների հողեր: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Արարատի մարզում՝ 980.34 հա, որից 978.85 հա՝ գյուղատնտեսական նշանակության, իսկ առավել փոքր մակերեսով՝ 4.36 հա, Վայոց Ձորի մարզում, որից 2.36 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 1548.17 հա հողեր:

Ստորև ներկայացվում է 2006թ. մարտին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

| <i>Մարզի անվանումը</i> | <i>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական.նշ հողերի</i> | | <i>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական.նշ հողերի</i> | |
|------------------------|--|--|---|--|
| | <i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i> | <i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i> | <i>Վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i> | <i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i> |
| Արագածոտն | 0 | 0.00 | 24 | 191.47 |
| Արարատ | 6 | 873.17 | 56 | 105.68 |
| Արմավիր | 0 | 0.00 | 23 | 296.44 |
| Գեղարքունիք | 1 | 200.00 | 47 | 363.23 |
| Լոռի | 0 | 0.00 | 12 | 438.42 |
| Կոտայք | 0 | 0.00 | 22 | 22.55 |
| Շիրակ | 3 | 435.00 | 0 | 0.00 |
| Սյունիք | 0 | 0.00 | 12 | 38.67 |
| Վայոց Ձոր | 0 | 0.00 | 4 | 2.36 |
| Տավուշ | 2 | 40.00 | 3 | 1.69 |
| Ընդամենը | 12 | 1548.17 | 203 | 1460.51 |

2006թ. մարտին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1135 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 9.0%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2006թ. փետրվարի համեմատ աճել է 37.6%-ով, իսկ 2005թ. մարտի համեմատ՝ 33.5%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /48.7%/, հասարակական նշանակության օբյեկտների /12.5%/, առանձնատների /16.1%/ և հողերի /17.0%/ նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 597 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2006թ. փետրվարի համեմատ աճել է 44.6%-ով, իսկ 2005թ. մարտի համեմատ՝ 59.2%-ով:

2006թ. մարտին հանրապետությունում գրավադրվել են 143.63 հա /այդ թվում 1.92 հա Երևանում/ մակերեսով հողեր, որից 139.84 հա՝ գյուղատնտեսական նշանակության: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արարատի մարզում՝ 56.23 հա, որից 55.72 հա՝ գյուղատնտեսական նշանակության, իսկ առավել փոքր՝ 0.14 հա բնակավայրերի հողեր, Տավուշի մարզում:

2006թ. մարտին հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման, համապատասխանաբար 24 և 63 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.7%: 2006թ. փետրվարի համեմատ մասնավորեցման գործարքների քանակը աճել է 4.4 անգամ, իսկ 2005թ. մարտի համեմատ՝ 2.8 անգամ: Մասնավորեցման գործարքների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Գեղարքունիքի մարզում՝ 49.4%:

2006թ. մարտին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 2301 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2006թ. փետրվարի համեմատ աճել է 52.8%-ով, իսկ 2005թ. մարտի համեմատ՝ 36.1%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 18.3%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /36.3%/:

ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն